

1910ին, Loisy իրաւամբ կ'ըսէր. «Ժամանակակից աստուածաբանութիւնը, ... ճշմարիտ Բարեկոնի աշտարակ մըն է, ուր դադարեցին խառնակութիւնը աւելի մեծ է՝ քան լեզուներու զանազանութիւնը»⁴:

Անարդար պիտի ըլլար, սակայն, ըսել, որ Յիսուսի աստուածութեան ընդդիմադիրներուն այս ծովածաւալ երկասիրութիւնները, այնքան փնամքով եւ մանրամասնութեամբ կատարուած պրպտումները, որեւէ դրական արդիւնք չեն տուած:

Ընդհակառակն, մասնաւորապէս վերջին շրջանին, մասնադէտներու ժրջան աշխատանքները նոր անկիւնադարձ մը ստեղծեցին սուրբ-գրային ուսումնասիրութիւններու մէջ:

Եւ յատկապէս, նկատի առնելով Ձեւերու պատմութեան (Formgeschichte) դպրոցին պատկանող հեղինակներու՝ K. S. Schmidt-ի, M. Dibelius-ի, Bultman-ի, M. Albertz-ի, G. Bertram-ի, եւայլն, մատուցած պատկառելի ծառայութիւնը՝ Ս. Գիրքի աշխատասիրութեան մարզին մէջ, յարմար դատեցինք առանձին գլուխ մը յատկացնել անոնց:

(Շար. 11)

Հ. ԵՓՐԵՄ ՏԵՐ ՂԱԶԱՐԻԱՆ

4. A. LOISY, «The Hilbert Journal», VIII - 3, Ապրիլ 1910, էջ 486:

Résumé

LE CHRIST A LA LUMIERE DE LA SCIENCE

LES DIFFERENTES OPINIONS

SUR LA PERSONNE DE JESUS ET LES EVANGILES

(cont. de «Bazm.», 1976, № 1-2, p. 136-156)

(P. EPHREM DER-GHAZARIAN)

L'auteur continue son exposition de la problématique moderne de l'historicité des Evangiles et de la personnalité de Jésus. Dans cet article, après une présentation succincte des principales hérésies de l'antiquité touchant la personne du Christ, il fait une exposition concise des thèses fondamentales qui se sont succédées dans la critique moderne à partir du XVII^e siècle sous l'influence des courants libéraux. L'auteur porte son analyse jusqu'à l'apparition de l'école des formes pour lui réserver une discussion à part.

ԳՐԱԿԱՆ ԷԶԵՐ

Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԻ

(Շար. տե՛ս «Բազմավէպ» 1975, ք. 3-4, էջ 442-445)

ՈՂԲ ԻԹ.

Անցայ աշխարհ, անցայ լեռներ ու ծովեր, Տէ՛ր, Գեղ զըտայ միայն ըսկիդք բարութեան. Դուն կ'աւետես ինձ ոսկեղօծ դարուններ, Եօթն անգամ եօթ թէ ունենամ ողբ գրջման:

Դուն աստղերուն տըւիր համրանք եւ անուն, Կարկառեցիր ձեռքերըդ որ չթափին. Եւ քեզ համար սահման չունի բարութիւն, Գու անունդդ թշուառները կ'ապրին:

Ահա քու լոյսդ եղաւ ովկեան, եղաւ ծով, Ուր չարութիւնը մարեցաւ իբրեւ կայծ. Ո՞վ մեղանչեց ու լոյս չուեց գրջումով, Ո՞վ հեշտացաւ ու բոց սրտին մէջ մընաց:

Ո՞վ լոյսին տեղ փաւարն հիւսեց ծիրանի, Ո՞վ սիրելին անլաց թաղեց ու ցնծաց. Ասոնց համար, Տէ՛ր, փմ հոգիս կը մաշի, Համբոյր չունին շրթներս առուի պէս ցամքած:

Ուր որ անցնիս՝ վիհն ալ երկինք կը փոխուի, Յաւերժական փաւարը լոյս կը տեսնէ. Դառնութենէն հեշտ մանանայ կը ծորի, Փառքերուդ հետ անունդ աշխարհս կը բռնէ:

22 Դեկտ. 1972

ՈՂԲ Լ.

Աստուած ողորմած, ներող եւ օրհնեալ,
 Խօսքերդ թող ըլլան ճշմարտութեան երգ,
 Թող դեւն հեռանայ, հողին ոխակալ,
 Արցունքս ըլլայ գութ՝ բուժէ ամէն վէրք:

Ձեմ ուղեր կրկնել, ըլլալ շատախօս.
 Գէթ ինձ շնորհէ խաւարին մէջ կեանք.
 Շնորհէ ինձ լոյս, աչք արտասուահոս,
 Միրոյ կաթով լի ձեռքիս ըմպանակ:

Ձղջումի համար պէտք չըլլայ մութ տեղ,
 Ո՛չ առտրւան սուգ, ո՛չ բաժակ լեղի,
 Ո՛չ քաղցր արտասուք իբրեւ սրտի դեղ.
 Միայն Աստուծոյ բարկութիւնն անցնի:

Մի՛ տաք ինձ օրհնէք, չար դործերս շատ են.
 Գովեստն է պարսաւ, անէծք՝ երկնի լոյս.
 Վա՛յ մեղաւորին, որ ճամբաներէն
 Կ'անցնի սրտաթունդ, երկմիտ եւ անյոյս:

Տէ՛ր, ի՞նչպէս այսքան հեծեծանքներու
 Չունենաս գութ գութ, աչքեր ողորմած.
 Որքան մեղք ունիմ լալու, ողբալու,
 Այնքան անունդ է բարերար Աստուած:

Վըհատած եմ ես, եղի՛ր քաջալեր,
 Խաւարին մէջն եմ, ճառագայթ մը տուր.
 Հողով վիրաւոր, կը փնտռեմ քու սէրն,
 Ելի՛ր ընդառաջ, բա՛ց երկնքի դուռն:

30 Դեկտ. 1972

ՈՂԲ ԼԱ.

Երկարէ՛ ձեռքերդ լեցուն բարիքով,
 Որքան շնորհես՝ հարուստ ես այնքան.
 Քու տալն օրհնէք է եւ դանձերու ծով,
 Կ'ըսեն լաւ է տալ՝ քան առնել միայն:

Ի՞նչ են իմ դանձերս շնորհէդ անդին.
 Ես մարտիրոս չեմ զինուած հաւատքով,
 Շուրջըս պըսակ են իրենց տեսիլքով
 Մարդարէն յոյսով, Առաքեալն խաչով:

Երբ կը բարձրանայ նըշան սուրբ փաշի,
 Ինձ համար աղօթք եւ նըւէր ըլլայ.
 Դուն ինձ առաջնորդ եղիր դիշերի
 Երբոր կը ներհեմ, լոյսը կը մարի:

Դուն ո՞ր հասակին արդեօք չես քաւեր,
 Գող զինուոր է քո՝ տըղան կաթնկեր.
 Ձես մոռնար երբեք ո՛չ պարն ու կայթեր,
 Խնձոյքն ու թատրոնն ունայն չես թողներ:

Բոլորն ալ քուկդ են, դուն ըստեղծեցիր
 Մեղաւորն, արդարն որ քեզ կը ճանչնան.
 Խըրոխտ ձիուն քով որոճը դըրեր,
 Աղաւնիին քով՝ ագռաւը դաղիր:

Այսպէս չէ՞ արդեօք լաւը չարին քով,
 Անգութն՝ հեղին քով, լկտին՝ պարկեշտին.
 Օրհնէքն՝ անէծքին, ներումն տխին քով:
 Ո՞վ կրնայ՝ հասնիլ քեզ ժառանգողին:

Ագուռ, 18 Օգոստ. 1973

ՈՂԲ ԼԲ.

Փոքրերուն հետ, խոնարհներուն ոտնահար
 Ես կը խնդրեմ գըթութիւն.
 Ինկածներ կան, մերժւածներ տարաշխարհ,
 Կ'ուզեն կեանքի փրկութիւն:

Ինկած եմ ես, հողին փարած գերդ սողուն,
 Արդ կը դընեմ ծունկ ծունկի,
 Քեզ եմ վստահ, դուն իմ ցոպս ես հաստատուն,
 Տէ՛ր, կանգնեցուր զիս կրկին:

Լիճն իմ լոյսին լի է աղի արցունքով,
 Քու բարութեանդ կը դիմեմ.
 Ձեռն նըլազիր՝ թէ ողորմիս լի դուքով
 Անկորուստ կեանք չնորհելով:

Ամենարուեստ բըժիշկ ես դու ինձ համար,
 Մոլորածին ճանապարհ.
 Մատնըլած եմ, կը հալածեն, պահէ՛ զիս,
 Տո՛ւր քըղանցքիդ տակ դադար:

Դուն ուրիշ լոյս, ունիս դէմքի ցնծութիւն.
 Դուն անձրեւ ես օրհնութեան.
 Շրթներս քեզմով կը թրթըռան անպարան,
 Ընտանի ես ինձ միայն:

Քեզ կը նային աղախիններ, ծառաներ,
 Կու վան աչքեր ցանկասէր.
 Հաղորդէ մեզ աստուածութեանդ բարեսէր
 Խըրախճանքով հոգեւոր:

Ագոլոյ, 23 Սեպտ. 1973

ՈՂԲ ԼԳ.

Սիրտըս խնկազգեաց՝ ընդունէ նըման
 Մարիամու իւղին.
 Ընայ երախտիք, նըւէր հոգեկան
 Կընոջ զղջումին:

Թող այս գիրքն ընայ բուրումն համալիր
 Խոստովանութեան.
 Փոխանակ գինւոյ՝ արիւնդ չնորհածիր,
 Բաժակ սրբութեան:

Փոխանակ ոսկի ապարանջանի
 Տո՛ւր դործօն բարիք.
 Քայոյի պերճութեան՝ քաղցրութիւն լուծի,
 Հաւատք գեղեցիկ:

Ինչո՞ւ պարծենամ հըպարտութեամբ սին,
 Պէտք է միշտ ողբալ.
 Լացըն ալ կու տայ մաքրութիւն սրտին,
 Եւ լոյսին դառնալ:

Կը զարմանամ թէ ինչո՞ւ չեմ այրիր
 Երբ մէջս է Աստուած,
 Բայց Աւետարանն է կեանքս երկնադիր,
 Պատկեր անեղծուած:

Ագոլոյ, 17 Հոկտ. 1973

ՈՂԲ ԼԳ.

Այս մութ ժայռերուն, այս ափին խոժոռ.
 Կը բախի ալիքն, ետ կ'երթայ փրփուր.
 Սեւ սիրտ մը վայ հոն, անունն է Նարեկ.
 Մովէ ծով ինկած լաստափայտ անդեկ:

Ճառագայթ կ'ոսէ, քող դերդ շամանդաղ.
 Օթոց բաղձալի ու տեսիլ խաղաղ.
 Թէ ձեռքդ երկարես կայծ տալու յեղուն,
 Նա կը բըռնկի, բոց կ'ընայ կրկին:

Այդ ես եմ, ո՛վ Տէր, կարօտ գըթութեան,
 Դուն ես իմ պարգեւս, լոյս աստուածական,
 Մագումն անըստուեր, տեսիլ անսահման,
 Դուն կամար, կամար այս վանքին վըրան:

Թող ես գոհ ընամ, ամէնուն համար.
 Ընան գոռ սեպուհ կամ գեղջուկ փոնար.
 Թող աչքերս քըխեն աղբիւր յորդառատ,
 Ընամ գղջումի նըւէր անաբատ:

Գիտեմ թէ ողբն ալ փունկի քոյր ունի,
 Թող մարդ մարդու հետ լալով համբարուի.
 Տէր, դուն կը բաշխես բարիք անսահման,
 Լոյս կը ջամբես հաց՝ խորանէ խորան:

Տուր ինձ խըրախոյս, պարտեզ տենչանքի,
Մատեներս թող ըլլան տաւիղ տասնաղի.
Ընդունէ՛, զօղէ՛, իմ երգերս երգիդ
Ինչպէս նըւազներն համայն երկնքիդ:

Ըրէ որ լըսողն հրեշտակի փոխուի,
Ինչպէս արտասուք մաքուր զղջումի.
Տէ՛ր, դո՛ւն կատարէ՛ ինչ ես ըսկըսայ,
Որ Հոգիդ իմ մէջ իբրեւ Լոյս ցոլայ:

ՈՂԲ ԼԵ.

Թէ մէկ կաթիլ բարութենէդ շնորհես,
Ինչպէս վըճիտ ցօղը ծաղկին,
Հրեշտակներէն մարդն աւելի վը սիրես,
Անոր համար քեզ մարդասէր կոչեցին:

Որքան մեծցար, ի՛նչ խորհուրդներ յըղացար,
Աստուածացար... Աստուածացար...
Ըզմեզ առիր, քու էութեանդ մօտ տարիր,
Շնորհքներովդ մեզ սրբեցիր բարերար:

Դուն ցանեցիր աստուածային սերմն օրհնած,
Քարէ սրտերը փափկացան.
Ճամբայ բացիր դէպի կեանքի ծովեր քաց,
Ըստեղծողի երբ շրթունքներդ բացուեցան:

Տո՛ւր աչքերուս լոյս քու ձեռքիդ հըպումով,
Լապտեր մը տուր որ չըմարէ սատանան.
Տո՛ւր որ ապրիմ քու սեղանիդ փշրանքով,
Ըրէ՛ այնպէս՝ մարմինս կոչուի սուրբ խորան:

Ոչինչ է ծովը մեծութեանդ օրինակ,
Բայց կարօտ եմ ձեռքիդ՝ անդունդ չերթալու,
Դուն լըսեցիր Առաքեալին աղաղակն,
Ո՛հ, դուն զիս ալ փրկէ ծովէն մեղքերու:

Վենետիկ, 25 Փետր. 1975

ՈՂԲ ԼԶ.

Ձեմ գիտեր ո՛րքան պարտաւոր եմ քեզ,
Ըստեղծող ես Դուն, եւ աշխարհիս տէր.
Տիեզերքն ափիդ, թողուցիր պարտքեր,
Ձարչարանքներով սարքեցիր հանդէս:

Թոյլ չըտուիր որ ձեռքեր դօսանան,
Մինչ քու մէկ խօսքովդ չորցաւ թըղենին.
Դուն որ դոյն արեան տըւիր լուսնակին,
Ժայռեր փշրեցիր, ներեցիր չարին:

Արուսեակն յանկարծ դոյն առաւ մըթին,
Երբոր քեզ տեսաւ խաչուած, անարգուած.
Բայց չար լեզուներ, սրտեր մոխրեցնած,
Պատիժի փոխան ներումը առին:

Ինչո՞ւ պահակներ չեղան սըրամա՛հ,
Երբ չնչին փողով մարմինդ ծախեցին.
Կնքեցին չիրիմդ, քեզ հող կարծեցին,
Մինչ Աստուած էիր, արարիչ անմահ:

Ագոյս, 30 Հոկտ. 1975

ՈՂԲ ԼԷ.

Ոստերս տըկար՝ մինչ պարգեւներդ հըգօր են,
Իշխանադուն, վեհութեանց վեհ հռչակուած,
Եւ մեղքերու դէմ սայրասուր սուսեր են,
Սէր կ'անձրեւեն, համբոյր կու տան հեղօրէն:

Ո՛հ, երջանիկ խաղաղութիւն երկնային,
Քանի՛ շնորհք տըկարութեանս չող եղան,
Ես չեմ կրնար դառնալ հրեշտակ օրհնաբան,
Հէզ ծառայ եմ, վարօտ սիրոյդ սուրբ հացին:

Քարացած սիրտ ունիմ, դաշտի պէս փռպռան,
Երկու աչքերս աղբիւր էին դըրախտեան,
Դուն ջուր տըւիր իբրեւ ծաղիկ բարութեան,
Բայց միշտ հող եմ, կարօտ ձեռքիդ զօրութեան:

Ձեռք ուղեր ես լսայթող լեզուն մարդկային,
 Գեղ են աչքերս, յոյս եւ լոյս ես ինձ համար,
 Դուն չես մոռնար մեր մարդկութիւնը տրկար
 Եւ չես ննջեր անսիրտ՝ հանդէպ մեր ցաւին:

Վերցո՛ւր ինձմէ ապտակ եւ թուք դարչնիլի,
 Վերցո՛ւր փաշիդ լոյսով ամէն նախատինք.
 Օրհնած անունդ վրաս բացուի զերդ երկինք,
 Ու քեզի պէս յարութիւն տուր եւ ինձի:

Ագուլայ, 3 նոյեմ. 1975

ՈՂԲ ԼԸ.

Ինչպէս երբեմն ես նիւթ առի խաւարէն,
 Գերի եղայ անդամներուս եւ մահուան.
 Տիրեց մարմինս, ես չըվախցայ կիրքերէն,
 Կաթիլ մը ջուր ծովն ինձ տըլաւ իր սրտէն:

Կան արդարեւ դահլիճ նստած կայսրներ,
 Կողքին բազմած իր սիրելի կայսրուհին.
 Կան շքնորհքի օրիորդներ, դշխոսներ,
 Հարս ու փեսայ եւ տափ ու փող երկնային:

Քրիստոս ինքն է սինն հըրեղէն կենդանի,
 Կեանքի աղբիւր վըտակներով բիւրաւոր,
 Լոյսի հըրաշք՝ որ մեր վըրայ կը ծագի.
 Արեւուն պէս առանց ամպի մեղաւոր:

Բայց աւա՛ղ ինձ, միշտ թշուառ եմ, եղկելի,
 Շրջապատուած արդարութեան սուրբէն.
 Վըճիւ կու տան ու կը քարչեն զիս դատի,
 Մերկ, ամօթով կը վըտարեն աչխարհէն:

Լալու բան է, հասակիս հետ եւ փուշեր
 Կը քարճրանան, հարուած կու տան հարուածի,
 Ո՛հ, շուտ ըրէ, ձեռքերդ բա՛ց ինձ, ո՛վ Տէր,
 Ես կարօտ եմ կենդանատու բըժիշկի:

Ագուլայ, 7 Հոկտ. 1975

ՈՂԲ ԼԹ.

Թողէ՛ք որ դառնամ մանուկ օրերու,
 Ինչ որ լըքեցի չարին խորհուրդով.
 Թախծալից հոգւով փարիմ ժամերու,
 Դառնալ Աստուծոյ սուրբ աղաղակով:

Ես որ վը գըրեմ այս շնչող մատեանն
 Ողբի եւ վայի, քաղաք մ'է այրի.
 Առանց միրգի ծառ, անաղօթք խորան,
 Ճըրադ մ'է մարած, փաւար է սրտի:

Թէ որոմի պէս խուրճ խուրճ զիս տանին
 Պատժող հրեշտակներ՝ դըժոխք նետելու,
 Թերեւս այս հէգ մարդն ալ կրակով այրեն,
 Վասնզի հոգին բոյն է ախտերու:

Թէ յիշեմ գալիք ահեղ դատաստանն,
 Ո՛հ, չի դիմանար իմ սիրտըս լալու.
 Կը պատէ հոգիս սեւ ամպի նըման
 Սարսափն ահաւոր մեղաւոր մարդու:

Ագուլայ, 19 Հոկտ. 1975

ՈՂԲ Խ.

Աստուած բարի, դուն ըստեղծող բոլորից,
 Լըսէ՛ հեւքիս եւ գալիքէն զիս փրկէ.
 Ամէն բանի կարող ես դուն, ազատէ՛
 Ձիս պարտքերէս, պահպանէ՛ սիրտըս անբիծ:

Խոկումներն իմ տագնապ պատեր է յաւատ,
 Ո՛չ անդունդներ, ո՛չ լեռ անհաս, ո՛չ ծործոր,
 Ո՛չ մարդկութիւնն իր ողբերով խորախոր,
 Կրնան առանց քեզ ինձ կեանք տալ բերկրաւէտ:

Դուն լոյս ես քաղցր, անդորրութիւն փրկութեան,
 Խաչդ է սուտեր՝ մեղքի լարեր խղճելու,
 Մերժէ՛ ինձմէ շունչը թունոտ դեւերու,
 Այնպէս ըրէ որ իմ կիրքերս մեղմանան:

Իմ հոգիս ալ պատկերիդ պէս նորոգէ,
 Լոյս թող ըլլայ, նըշոյլի պէս սիրասուն.
 Քեզ պէս ըլլամ՝ պարզ ու մաքուր տեսութիւն,
 Փայլուն շընորհք, աչքերս աստղեր բիւրեղէ:

Ագովոյ, 12 Նոյմ. 1975

ՈՂՐ ԽԱ.

Որդի Աստուծոյ Հօրն երկնաւորի
 Ահաւոր ծընունդ, փառքի լոյս մեղի.
 Արեւէն անդին ունիս նըշոյլներ,
 Ուր տիւն է պայծառ, խաւար չի տիրեր:

Կեանք կ'առնէ մեռածն, օր է յաւիտեան,
 Վէրքը կ'ողջանայ, լացը կը դադրի,
 Ազատ են մարդիկ, կը փշրի շղթան.
 Գիշերը կ'անցնի, մութ դէմքեր չըկան:

Դուն չեկար ըզմեզ առաջնորդելու
 Կորուստի ճամբան. թո՛ղ իմ ծանր մեղքերս,
 Երկինքներ երթամ, աշխարհէն հեռու,
 Անանց օրերու լոյսը վաշխելու:

Ագովոյ, 2 Դեկտ. 1975

ԾԱՆՕԹ. ԽՄԲ. - Հեղինակին մահով (10 Նոյեմբեր 1977) ամաւարտ կը մնայ այս
 ֆերթուածաշարքը, որ ծրագրուած էր հասցնել միմէն ՈՂՐ ՂԴ, Նաբեկի «Ռամբե-
 րում քիւիմ համաձայն:

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԵՐ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ
 ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ե-ԺԸ դդ., Հատար Բ.
 Առաքել Սիւմ. - Բէապրիկէ Հոռմ.

Գրեց

ՅԱԿՈԲ Ս. ԱՆԱՍԵԱՆ

Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրտ. 1976, էջ XXVI
 + 1546 + 2 չի. սիւմ (համագումար՝
 799 էջ, մեծադիր, երկսիւմ): Տպագ-
 րակ՝ 1500: Գին՝ 5 ռ. 42 կ.:

Իր անդրանիկ եղբորմէն տառնեւե-
 թը տարի յետոյ լոյս տեսաւ, վերջա-
 պէս, երկար ժամանակէ ի վեր սպաս-
 ուած այս հոյակապ հատորը, որ ար-
 դէն 1987 թուականին, ըստ մեր քաղա-
 տեղեկութիւններուն, յանձնուած էր ՀԵ-
 րատարակութեան՝ Երեւանի ՀՍՍՀ Գի-
 տութիւններու Ակադեմիայի՝ Պատմու-
 թեան Հիմնարկի կողմէ: Ո՛րքան, ան-
 շուշտ, քաջաբերական պիտի ըլլար բազ-
 մահմուտ ու վաստակաւոր Հեղինակին
 համար՝ եթէ իր ծննդեան եօթանասնա-
 մեակի յիշատակին առիթով (1974) լոյս
 տեսած ըլլար այս բազմաթէք աշխա-
 տութեան ու շարքին նաեւ երրորդը.
 Հատորներ՝ որոնք սքանչելի փառապը-
 սակը պիտի կազմեն այս բազմավաստակ
 մշակին մեղուաջան ու երկարամեայ աշ-
 խատանքին, միաժամանակ՝ հսկայօրէն
 պիտի նպաստեն հայագիտութեան արագ
 զարգացման, եւ հուսկ՝ ոսկեղէն օղակը
 պիտի դառնան ՀՍՍՀ Գիտութիւններու
 Ակադեմիայի Հրատարակութիւններուն:

Արդարեւ, առաջին իսկ պահէն՝ երբ
 կը թերթատենք այս հատորը, կը զգանք
 իսկոյն թէ մեծանուն Աճառեանի ոգին
 կը թեւածէ հոն, անոր նման անդուլ
 աշխատող, անխնջ հաւաքող, պրպտող

ու քննարկող բանասէր մը ցուցարբե-
 լով, իր մէկն մէկ էջէն, յանձին Յակոբ
 Ս. Անասեանի, որ իսկական ակադեմա-
 կանի մը բոլոր տոմարներն ունի:

Հատորը կը բացուի նախորդին մէջ
 նշուած «Ձեռագրացուցակներու շարու-
 նակութեամբ, §§ 179-355, էջ III-XXII
 (մենք պիտի առաջարկէինք զրել՝ Գ-
 իթ). այնուհետեւ կը ներկայացունեն, Ա
 զրէն՝ 153 անուն, թողլով առաջումնե-
 րը՝ որոնք հարկւրները կ'անցնին. իսկ
 Բ զրէն՝ 111 անուն. կցուած են 16 անուն՝
 որպէս յաւելում Ս զրէն. ուրեմն,
 ընդամենը՝ 270 մայն կամ անուն, շուրջ
 800 էջի վրայ: Մենագրութեան եւ խո-
 րունկ ուսումնասիրութիւններու հան-
 դամանքն ունին յատկապէս հետեւեալ-
 ները. Առաքել Սիւմեցի (1-89), Աստու-
 ծաբանական եւ Դաւանաբանական գրա-
 կանութիւն (216-308), Աստուածաշունչ
 Մատեան - Հայկական բնագիր (309-
 668), Արիստոտել Ստագիրացի (806-
 872), Աւետիք Եւդոկիացի (980-1009),
 Բաղդասար Դպիր Կ. Պալսեցի (1062-
 1160), Բառարանագրական միւսքեր (1178-
 1242), Բարբաղիմէոս Բռնոմացի (1284-
 1320), Բարսեղ Կեսարացի (1344-1405):

Իւրաքանչիւր անունի կամ մայնի հա-
 մար՝ յետ հաղորդելու կենսագրական
 եւ քննարկական ճշգրիտ ու կուռ տե-
 ղեկութիւններ ու մանրակրկիտ անդրա-
 դարձութիւններ, նկատմամբ ինքնագիր
 եւ թարգմանածոյ երկերու, օգտագոր-
 ծելով տպագիր եւ անտպագիր անհամար
 ձեռագրացուցակներ, եւ զգաւորաբար՝
 Երեւանի Մաշտոցի անուան Մատենա-
 դարանի Հարուստ Հաւաքածոյին ձեռա-
 գիրները, հուսկ՝ կը ներկայացնէ, իւ-
 րաքանչիւր հարցի շուրջ, սպառող գրա-
 կանութիւն (bibliographie), որ եր-